ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/49, 16.06.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-102/21» գնանշման հարցում

Գնման առարկան՝ ՆՏՎ (CBPTK) համակարգի արդիականացման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-102/21» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 08.06.2021թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով կայացրած որոշումը՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի մասնակցության հայտը դադարեցնելու վերաբերյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ

որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորաղբյուր, Ամառանոցային 34
հեռ: (+374) 30 500779
Էլ.փոստ՝ info@ekra.am

Պատվիրատու՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ՆՏԿ (CBPTK) համակարգի արդիականացման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-102/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ

ԲՈՂՈՔ

Բողոքի նախապատմությունը և փաստերը

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ՆՏԿ (CBPTK) համակարգի արդիականացման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-102/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով, ի թիվս այլ մասնակիցների, էլեկտրոնային հայտ է ներկայացրել նաև «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն:

Քանի որ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն հայտ ներկայացնելու ժամանակ պարզել է, որ այդ պահին չունի Ընկերության armeps համակարգից օգտվելու գաղտնաբառը, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ գաղտնաբառի վերականգնումը պահանջելու է ժամանակ, որի արդյունքում հնարավոր է, որ ՍՊԸ-ն բաց թողներ հայտեր ներկացանելու համար սահմանված վերջնաժամկետը, ապա «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն հնարավորություն չունենալով հայտը բեռնել սեփական www.armeps.am կայքի էջից և որպեսզի հնարավորություն ունենա մասնակցության հայտ ներկայացնելու «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-102/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին՝ օգտվել է այլ www.armeps.am կայքում գրացնված այլ ՍՊԸ-ի էջից և բեռնել հայտը «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի www.armeps.am կայքի էջից /գործում են նույն շենքում/:

Սակայն «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-102/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի հայտը մերժվում է, քանի որ վերջինս հայտը ներկայացրել «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի էլեկտրոնային armeps համակարգի էջից:

□ **<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները</u>**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով ***մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:***

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ***ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:***

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն տեխնիկական խնդրի պատճառով զրկվել է **իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:**

Մասնավորապես՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-102/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի հայտը մերժվում է, քանի որ վերջինս հայտը ներկայացրել «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի էլեկտրոնային armeps համակարգի էջից:

Մինչդեռ մասնակցության հայտ ներկայացրել է ոչ թե «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն, այլ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն՝ ինչն հավաստվում է «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը հաստատված լինելու հանգամանքը:

Բողոքներ քննող անձին խնդրում եմ նկատի ունենալ, որ քանի որ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն հայտ ներկայացնելու ժամանակ պարզել է, որ այդ պահին չունի Ընկերության armeps համակարգից օգտվելու գաղտնաբառը, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ գաղտնաբառի վերականգնումը պահանջելու է ժամանակ, որի արդյունքում հնարավոր է, որ ՍՊԸ-ն բաց թողներ հայտեր ներկացանելու համար սահմանված վերջնաժամկետը, ապա «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն հնարավորություն չունենալով հայտը բեռնել սեփական www.armeps.am կայքի էջից և որպեսզի հնարավորություն ունենա մասնակցության հայտ ներկայացնելու «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-102/21» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգին օգտվել է այլ www.armeps.am կայքում գրացնված այլ ՍՊԸ-ի էջից և բեռնել հայտը «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի www.armeps.am կայքի էջից /գործում են նույն շենքում/:

Փաստացիորեն հայտը ներբեռնելու արդյունքում Բողոքաբերը ներբեռնել է իր հայտը՝ «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի www.armeps.am կայքի էջից, ինչը տարակուսանք է առաջացրել գնահատող հանձնաժողովի մոտ, որն էլ մեր կարծիքով պատճառ է հանդիսացել, որ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մերժվում է «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի հայտը, քանի որ հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացված են «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի էլեկտրոնային armeps համակարգի էջից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-102/21» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 08.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով կայացրած որոշումը՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի մասնակցության հայտը դադարեցնելու վերաբերյալ:

Առդիր՝ թերթ:

Հարգանքով՝

«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի տնօրեն _____ **Կարեն Աբրահամյան**

___.___.2021թ.